

## ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### *Ամենամյա վիճակագրական տվյալներ*

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունում ստացված հարցումների և դիմումների վիճակագրության վերաբերյալ

2015 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն մուտքագրվել է 30298 դիմում և գրություն 2014 թ. 18551-ի դիմաց, կամ 11747-ով (63,3 %) -ով ավելի: Նույն ժամանակահատվածում Լիցենզավորման գործակալության «Մեկ պատուհան» սկզբունքով տրամադրվել է մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների գործունեության նոր նմուշի 8401 լիցենզիայի ներդիր:

2015թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության էլեկտրոնային փոստով և պաշտոնական կայքի միջոցով առցանց ստացվել է 789 դիմում և գրություն (2014 թ.՝ 514): Նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 275 կամ շուրջ 35%:

Բոլոր դիմումներին և գրություններին ընթացք է տրվել օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

Նույն ժամանակահատվածում 583 քաղաքացիներ ստացել են անվճար երթևեկության վկայական:

Վերոնշյալ ժամանակահատվածում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներից ստացվել է 25 հարցում, նախորդ տարվա 28-ի դիմաց, իսկ զանգվածային լրատվամիջոցներից, քաղաքացիներից և իրավաբանական անձանցից առձեռն, էլեկտրոնային փոստով կամ նախարարության պաշտոնական կայքի միջոցով առցանց ստացվել է տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ գրավոր և էլեկտրոնային 145 հարցում (2014 թ.՝ 100 ), որոնց ընթացք է տրվել և ըստ էության պատշաճ պատասխանվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարցումների և դիմումների վերահսկողության ներքին համակարգի միջոցով ընթացք է տրվել ստացված բոլոր դիմում-բողոքներին և գրություններին: Անհապաղ կամ հնարավորին սեղմ ժամկետում պատասխանվել է տեղեկություն ստանալու վերաբերյալ բոլոր բանավոր հարցումներին:

Ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր և էլեկտրոնային հարցումների դեպքում նախարարությունը քաղաքացիներից չի պահանջել հիմնավորել հարցումները, տեղեկատվություն տրամադրելու համար որևէ վճար ևս չի պահանջվել:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պաշտոնական կայքում հրապարակված են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունները, որոնք թարմացվում են օրենքով սահմանված 10-օրյա ժամկետում և մատչելի են երկրի ամբողջ տարածքում:

Մասնավորապես նկատի են առնվում նախարարության՝ որպես տեղեկություն տնօրինողի, գործառույթները, գործունեության տարեկան հաշվետվությունները, բյուջեն և դրա կատարման հաշվետվությունները, նախարարության կառուցվածքը, ղեկավար պաշտոնատար անձանց անունները, ազգանունները, աշխատավայրի հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեները, նախարարությունում աշխատանքի ընդունման կարգը և թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկությունները և այլն:

Նախարարությունում գործում են և կայքում հրապարակված են շուրջօրյա «Թեժ գծերի» հեռախոսահամարները, որոնցով կարող եք օպերատիվ տեղեկանալ հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների իրավիճակին, մարդատար-տաքսի ավտոմեքենաներով ուղևորափոխադրումներ իրականացնելու լիցենզավորման գործընթացին, ինչպես նաև Ձեր գրությունների և նամակների ընթացքին:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պաշտոնական կայքը քաղաքացիներին հնարավորություն է ընձեռում նախարարությանը հասցեագրած դիմումների ընթացքին հետևել նաև առցանց:

Քաղաքացիների ընդունելության ժամանակացույցին համապատասխան՝ նախարարությունում սահմանված են ընդունելության հատուկ օրեր:

***ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի  
հասարակության հետ կապերի բաժին***